




ԿՐՈՆԱ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

«Ի սմին աւուր՝ ի գեկտեմբերի Իէ (27), ննջումն և հանգիստ երիցս երանեալ քաջ րապունապետին Գրիգորի, աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ:

[Ս]քանչեւ յայս Աստուծոյ էր ազգաւ Հայկազնի, աշխարհաւ կրկնակի՝ ի հայրենական տոհմէ Քաջբերունի և մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ, ի գեղաւանէն Թմոք. և սնեալ ի ձեռն հարազատ եղբօրն՝ ի տան Թադաւորին Դաւթի: Եւ էր մանուկ գեղեցկատիպ, և ուշիմ, և լի հոգոյն պարգևօք: Եւ յորժամ վամեցաւ մեծ փիլիսոփայն հայոց Յովհաննէս Որոտնեցին գնալ յԵրուսաղէմ՝ յերկրպագութիւն՝ սուրբ տեղեացն, և տեսաւ զմանուկն Գրիգոր յառաջադեմ յամենայն ուսմունս, էառ առ ինքն, և արար ըստ հոգոյ որդի, և սնոյց ի բարին, և ուսոյց զամենայն իմաստ աստուածային գրոց և արտաքին սոփեստից: Եւ տարեալ ի հանգիստ զամբարանի Սուրբ Լուսաւորչին, ի Սեպուհ լեառն, և ետ ձեռնադրել սարկաւագ, և

յանուն Լուսաւորչին կոչեցաւ Գրիգոր և անուամբ և իրօք ելից զտեղի նորա՝ լուսաւորելով իմաստութեան լուսովն զԱզգս Հայոց: Եւ տարեալ յԵրուսաղէմ արար քահանայ, և դարձեալ բերեալ առ գերեզմանն Սուրբ Լուսաւորչին՝ արար վարդապետ՝ աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ տանն Աստուծոյ, և բերեալ յաշխարհն Սիւնեաց, և զկնի մահուանն ետ հրաման նստել յաթոռ մեծ համալսարանին Եսայեայ և բարունապետ Հայոց Մեծաց:

Եւ մեծաբեցաւ և պատուեցաւ ի մեծ աշխարհակալէն Թամուրէն, և յորդոյ նորին Միրանշայէն. և պատուեցաւ Ազգս Հայոց յայլասեռիցն վասն ախորժ և իմաստալեզ ընդ ինքն զԵհիկն Գրիգորի: Այլ և արար զիրս յոգնիմաստք ընդդէմ ամենայն ազգաց, ճշմարիտ ցուցանելով զհայք. և արար բանս խրատականս, և իմաստ և հանճարս, և իմաստնացոյց զԱզգ Հայոց քան զամենայն ազգս, և ուղղեաց զկարգս և զսահմանս եկեղեցոյս: Եւ օր անդադար յընթերցումն և

ի գրել աստուածային իմաստից, և անձան-
 ձիր ի յաղօթս, և անպարապ ի ծնրադրութիւնս.
 աղքատասէր և օտարասէր. առատ ի տուրս
 աղքատաց, խարազնաղգեստ մարմնով և

(27), և թաղեցաւ ի տօնի մեծ առաքելոցն
 Պետրոսի և Պօղոսի, և եղև դասակից և պա-
 տուակից նոցին, ի թվին ՊՄԸ (1409). ի
 փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, օրհնե-



ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱԾԻՆ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՎ

խոնարհ հոգւով և ծննդական մտօքն. հա-
 սակաւ երկայն, դիմօք պայծառ, տեսակար-
 ժանի գոռողութեանն, հերօք խարտեաշ, մու-
 րութ արատ, միշտ պահեցող, յոյժ արտա-
 սուենդ, պատուող տօնից, սիրող սրբոցն և
 բանից [նոցա]։ Հանգեաւ երանելի մահուամբ
 ի վանքն Տաթևոյ ի դեկտեմբերի ի է

լոյն յաւիտեանս, ամէն. որոյ յիշատակն
 օրհնութեամբ եղիցի, ամէն։

ՄԱՏԹԷՆՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

(Հայկական ՍՍՌ Պետական
 մատենադարան, ձեռագիր № 6607,
 ք. ք. 5ա—6ա)։